

սորիս ձեռնարկեցաւ, այլ նստաւ յաթոռ սուրբ առաքելոցս, այսինքն ի վիճակ նոցա, որ է Հայաստան աշխարհ, ուր ոչ երբեք պակասեաց յաջորդութիւն բրիտանեական, ոչ միայն յԵղեսիա, որ յետ միանգամ լուսաւորութեան՝ միշտ ունէր զհօտ հաւատաշեւոյ ի ծոցի իւրում, այլ և ի Մեծն Հայս¹. ուր կային բրիտանեայք սփռեալք առաւ և անդ՝ հայաժանօք հանդերձ»։ Զայդ պիտի ջանանք պարզել յաջորդ յօդուածով։

Շարայարեղի Լ. Ս. ՍԱՐԵԱՆ



Հ Ա Ն Ք

ՅԻ ԻՐԵՆՑ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

(Շար. տես էջ 58)

Ծիրամանիկ

ՔԱՆԱՍԷՐ մը, այս անուամբ կոչեց գաղ. Opale irisée, [Երեւակ ծիածանեալ] բառը, որ կը նշանակէ ծիածանի գոյներով շողշողուն գեղանի հանգ մը։ Նախնեաց հնարած Բազմսգուծի ակն բառը՝ կրնանք սեփականել այս գաղ. բառին²։

Ծիրամարար

Տարիներ առաջ կազմուած բառ մ'է. աւոր հոմանիշ են Պրիփիւր, Ծիրանի քար և կամ Ծիրամարար։ Լ. Քալունի վարդապետին բառարանին մէջ Ծիրամարար զրուած է, իսկ Նորայրին մէջ Ծիրամարար. այս բառարաններէն առաջ կազմուած են այդ հո-

մանիշը, և առնուած յն. πορφύρεος բառէն, որ կը նշանակէ Ծիրամեղրոյն. իսկ Պրիփիւրը, տառադարձութիւնն է նոյն յունարէն բառին. ուսկից փոխառեալ են նաեւ գղ. Porphyre, իտ. Porfido, հոմանիշ բառերն։

Ծմբակապար

Նորակազմ բառ մ'է և սեփականուած գղ. Galène բառին, զոր տարիներ առաջ Լ. Քալունի վարդապետն կոչած է Քալէն։ Վաղդիւրէն բառին նաեւ Sulfure de plombը հոմանիշ ըլլալով, զայս թարգմանելով կազմուած է Ծմբակապար բառը. Նորայր բիւզանդացի կը թարգմանէ Ծմբակար կապարոյ, լատ. տարրաբանական անունակոչութեան պէտք է թարգմանել Ծմբակ կապարոյ։ Քալէնիստ և Կապարի փայլունկ, Գալէնի հոմանիշներ են։ Այսօր հոմանիշ բառերու մէջ, զուցէ ընտրելագոյնն կամ Գալէնն և կամ Ծմբակապարն պիտի համարուի։

Ծմբակար

Վերջերս բանասէր մը կազմած է Ծմբակար բառը և սեփականած գղ. Pyrite, որ շատ տարիներէ ի վեր կոչուած է Ռոշնա, Ռուշնա, Լուսոյ քար. նոյնպէս նաեւ Մարկասիտ, Մարգաշիտա կամ Մարգաշիտ [Marcassita, Marchesita]. այս հին բառերուն աւելցան Հրաքար, Երկամալիմ, Պիւրիտ՝ հոմանիշը։

Վերջիջեալ հոմանիշներէն, Ռոշնա կամ Ռուշնա, փոխառեալ են պրսկ. لاشى = ըռլինա՝ հոմանիշէն։ Մարդաշիտա կամ Մարկաշիտա, ծագած է արաբ MARKAZAT⁴. [փորթուզ. marguezita]։ Հրաքար թարգմանութիւնն է յն. արկուշ = արդ քար հոմանիշին. իսկ Պիւրիտ և տառադարձութիւնն նոյն յն. հոմանիշին։

Ականց զիբը [տպ. Յոհաննէս Պողոսի. Պօլիս 1779] Մարգաշիտայի վրայ հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ⁵։

1. Արարատ ամսաթերթ. 1868. էջը 56-58. — 102-103։

2. Հմմտ. Բազմ. 1899. էջ 16։

3. « Լուսաւոր. Այտրն. զրոյնքս 2. Յուլիանի զգարն Մարգաշիտա յորմէ առնեն Ծարար »։ Հմմտ. Պրսկ. Բառարան Պօլիս. 1826։

4. Ոմանք կը կոչեն Մարկասիտ (Հմմտ. Հանքաբանութիւն Վիեննա 1897) և է տառա-

դարձութիւն գղ. Marcassite բառին. բայց աւելորդ էր այս տառադարձութիւնը, քանի որ շատոնց ունինք նոյն բառի արարերէնէն տառադարձեալ մի քանի բառեր։

5. Կը գրէ. « Զուս (Մարգաշիտա) Սենկի թոշնայի կոչեն, և այն բազմատեսակ է. . . զլոյս տեսութեան յաւելու և մինչ քաջախով օճիցեն՝ զսփրտակութիւն անգամայ տանի և

Ծծումբ

Անուամբ և յատկութեամբ ծանօթ է հանք ամենուն, բայց անծանօթ է իւր ստուգարանութիւնը: Հնչականութեամբ աւելի փոքր ինչ կը մերձենայ եւրոպական հոմանիշ բառերու՝ քան թէ արեւելեան լեզուաց: Ըսածնիս կը տեսնենք հետեւեալ բառերուս մէջ: Ծծումբն [ըստ ոմկ. Ծծում Ծրծում] կոչի ասոր. ܐܕܡܝܐ = քիւլլիթի,

երբ. ܐܕܡܝܐ = կոֆրիւ, արաբ. كبريت = քիւլլիթ, պրսկ. دگر = քիւլլիւտ, յն. θειον = դիւոն, լատ. Sulphur, իտ. Solfo, սպն. azufre, անգլ. Sulfur, գը. soufre, գերմ. schwefel: Այս վերջնոց՝ այսինքն եւրոպական բառերու մէջ, կը տեսնենք մեր Ծծումբ բառի ծ, ու և ր տառերու հնչումն, ու աստի կը հետեւցնենք, թէ ուսկից որ այդ եւրոպական բառերը ծագած են, նոյն արմատական բառէն նաեւ մերինն ծագած կրնայ ըլլալ. արդ, եւրոպական Sulphur բառն՝ սանսկրիտ सुल्फुर = ծծ, u = ու, v = ր): Հիւնքեարպէյնեան

զմազն գանգուր անէ, և թափման արտեւանաց յոյժ բարի է, և զարմատո նոցա ամբողջացանէ, և զհեր արտեւանաց՝ ի սքիտականաւ Նալը պահէ, և ու յամենայն լերին լինի »: 1. Հմմտ. Ստուգարանական բառարան. Կ. Պ. լիս աղ. Գ. Պաղտատեան 1894: Կը ստուգարանէ (էջ 136) « Անձնաւորեալ Վուլկանոսը (vulcanus) կղզի մըն է vulcania անուանեալ... որ միշտ կը վառի, և անընդհատ ծծումբ զտուր կու տայ առատօրէն: Այս կղզին Նախապէս կը կոչուէր Իքս, որ Թարգմանի՝ նուիրական, արքայան, վասն զի նուիրական էր Վուլկանիսի, և ինչպէս որ ըստեցաւ, անգլաբար ծծումբը զտուր կու տայ, և յունարէն θετον, θετον, նշ. ծծումբ, բայց Թարգմանի՝ աստուածային, գերաբուն: — Հիպիատոս... ի քերտ. նոյ ժայթքէր հոշը (Վերդ. Ինէ. Բ.): Արդ ինչպէս որ Ափրոդիտէ Հեփեստոսի կամ Վուլկանոսի կիբը ունի կամար մը. և այն կամարն է՝ ըստ մեզ՝ Դիափան, և ծիափանը Զուրբը կը ծծէ ու կը լիմէ, և նոյնպէս ալ նորա այլը, Վուլկանոս ունի զԾծումբ, և Ծծումբն է ծծող և քմպող (ծծ. ումբ) որ ծծէ և ըլլայ »: Այս է Հիւնքեարպէյնեան բանասէր քահանայի ստուգարանութիւնը:

բոլորովին հակառակ կը ստուգարանէ, ըստ իւր գիտութեան, այս բառը բոլորովին հայնակ է, ու իւր կարծիքը հաստատելու համար, հետեւեալ՝ մանրամասն տեղեկութիւնը կու տայ. և Ծծումբը կը ստուգարանէ Ծծող ըմպող (Ծծ-ումբ). Հիւնքեարպէյնեանի այս ստուգարանութեան ճշդութիւնը կամ անճշդութիւնը ընթերցողին համոզման կը թողուի: Ծծումբ բառը Սուրբ գրոց մէջ շատ տեղ յիշուած է [Դիւնդ. Ժ. 24. — Բ. Օրէնք Ի. 23. — Գ. Մակ. Բ. 3. — Սաղ. Ժ. 7. — Նաւ. Լ. 33. — Նաւ. ԼԳ. 9. — Եզե. ԼԳ. 22, և այլն] և նոյն բառը բաղդատելով եօթանասնից յոյն բնագրին հետ, կը տեսնենք որ ճշգրտեամբ միշտ յոյն θετον բառին համապատասխան Ծծումբ գործածուած է և ոչ ուրիշ բառ:

Շարայարեի

Հ. Ս. ԵՐԵՎ.



ՆԿԱՐԱԳԻՐ ԲՆԱՇԻԱՐՀԻ

ԱՇՏԻՇԱՏ

ԱՇՏԻՇԱՏ կամ ՅԱՇՏԻՇԱՏ. — Հին և հռչակաւոր, նախ զիցանուէր և ապա ըրիւստոսանուէր բաղաբ կամ աւան Տուրքիւ, բանի Տարոն գաւառի մէջ, Եփրատայ հիւղին Արածանոյ աջկողմը բարձրացող Գարբէ լեռան սարահարթ բարձրաւանդակի մը վրայ. Ս. Կարապետի վանից արեւելակողմը՝ 6 ժամ հեռու, և Մատթաւանից հիսիսակողմը 1 ժամ հեռաւորութեամբ: Այսպէս կոչուած է իր մեհնիին մէջ հաշտութեան զահեր և պաշտամունք շատ կատարուելուն պատճառաւ, ինչպէս կ'ըսէ նաեւ Ագաթանգեղոս (606). « Որ և անուանեալ ըստ յաճախապաշտ պաշտաման տեղեացն Յաշտիշատ »: Կը ստուգարանուի իբրեւ հաշտարան կամ Հաշտարանն տեղ վասն զի առաջին վանին Աշտ ելած է պարսկերէն 𐭠𐭡𐭥 Աշի բառէն, որ կը նշանակէ հաշտարան, և շատ մասնին միանալով յատուկ անուանց հետ կը նշանակէ քաղաք կամ տեղ, ինչպէս՝ Երուսաղեմաշտ, Վարդանաշտ, Վասակաշտ, և այլն, այս